ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ՏՈՆԱՀԱՆԴԵՍ, ՈՐԻ ԹԱԳԱԿԻՐԸ ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԳՐՈՂՆ ԷՐ

Փետրվարի 17-ին, Վրաստանի գրողների տանը տեղի ունեցավ վիրահայ անվանի բանաստեղծ, թարգմանիչ, հայ-վրացական գրական կապերի նվիրյալ մշակ, «Վրաց մշակույթի դեսպան» կոչման ասպետ, բազմաթիվ պարգեւների ու մրցանակների դափնեկիր Անահիտ Բոստանջյանի ծննդյան 65 եւ գրական գործունեության 40-ամյակներին նվիրված մեծարման երեկոն: Այն կազմակերպել էր Վրաստանի գրողների ստեղծագործական միությունը: Հանդիսությունին իրենց մասնակցությունը բերեցին Վրաստանի գրական աշխարհի հայտնի դեմքեր, գրական ության, մշակույթի եւ արվեստի երկրպագուներ:

Միջոցառումը, իր գեղեցիկ միտվածությամբ, մի էջ եւս ավելացրեց հայ-վրաց շարունակական բարեկամության հին ու բարի մատյանին:

Երեկոն բացվեց վրաց անվանի բանաստեղծ Մաղվալա Գոնաշվիլու ողջույնի խոսքով, որտեղ մասնավորապես ասվեց հետեւյալը. «Այսօր առանձնահատուկ օր է Վրաստանի Գրողների տանը, քանզի այս օրը յուրահատուկ սիրո օր է: Ժողովուրդների միջեւ անկեղծ բարեկամության եւ անկեղծ սիրո օր: Օրն է մի տիկնոջ, ով արդեն 40 տարի ծառայում է իրեն թանկ ու սիրելի վրաց եւ հայ ժողովուրդներին: Երկրպագում է երկու հող ու ջրի եւ աղոթում է այդ հող ու ջրերի համար՝ իր բանաստեղծություններով, իր թարգմանություններով, իր լրագրողական գործունեությամբ: Եվ եթե մարդիկ ուզում են, որ երկիրը լինի խաղաղ, բարձր ու մարդկային հարաբերությունները լինեն գեղեցիկ, Անահիտ Բոստանջյանի նման մարդկանց պետք է ասել, որ երկար ապրեն եւ իրենցով գեղեցկացնեն մեր գոյությունը, սերը, բարեկամությունը...»:

Ապա՝ խոսքը փոխանցվեց Վրաստանի գրողների միության նախագահ Ռեվազ Միշվելաձեին:

«Թանկագին հայ գործընկերներ, ներկաներ, այս տունը մեր ընդհանուր տունն է,- ասաց Միշվելաձեն: - Ցավոք, այսօր պակաս է հեռուստատեսությամբ հնչում ժողովուրդների բարեկամության մասին, հայ ու վրաց ժողովուրդների նախնիներ Հայոսի ու Քարթլոսի մասին: Ժողովուրդներ, ովքեր, հաճախ, համատեղ են դիմակայել ու հաղթել պատմության արհավիրքները... Ի ամրապնդում մեր բարեկամության կամուրջի՝ այսպես միասին, եղբայրաբար անցել եւ անցնում ենք մեր երկար ճանապարհը: Եվ ուրախ եմ, որ վրաց գրականությանը ծառայող տիկնոջ հոբելյանը միասին ենք նշում: Անահիտ Բոստանջյանի կողմից թարգմանվել է 40 գիրք, այդ թվում նաեւ իմ գիրքը: Եվ ահա, վրաց ու հայ գրականությունների եւ նրանց միջեւ գրական կապերի ամրապնդմանը ներդրած բացառիկ ավանդի համար՝ Ա.Բոստանջյանին տրվում է Անա Կալանդաձեի անվան գրական մրցանակ»: Ռեվազ Միշվելաձեն չմոռացավ նշել, որ Անահիտը հայերեն է թարգմանել Ա.Կալանդաձեի՝ «Սխվա Սաքարթվելո սադ արիս» («Էլ որտե՞ղ կա այլ Վրաստան») հայտնի բանաստեղծությունը:

Բարձր մրցանակի հետ՝ հոբելյարին հանձնվեց նաեւ դրամական պարգեւ: Ու, իհարկե, նրան հղվեցին բազում բարեմաղթանքներ, որոնց միջով, կարմիր թելի պես անցավ եւ ուրվագծվեց Վրաստանի ու Հայաստանի գրողների միությունների անդամ Անահիտ Բոստանջյան բանաստեղծի, թարգմանչի, հրատարակչի, «Կամուրջ» տարեգրքի խմբագրի, լրագրողի, շուրջ չորս տասնյակ սեփական եւ թարգմանական գրքերի հեղինակի ստեղծագործական դիմանկարը:

Դիմելով Հոբելյարին՝ Վրաստանի ժողովրդական բանաստեղծ, հայ ժողովրդի վաղեմի բարեկամ Ջանսուղ Չարկվիանին իր խոսքում նշեց, որ ուրախ է իր շնորհավորանքը հղելու՝ «Սիրով լեցուն մարդու, սիրով լեցուն այն թարգմանչին, ով գնում է Իսահակյանի, Գալակտիոնիի եւ այլ մեծերի ճանապարհով»:

Ապա հավաքվածներին ընթերցվեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի շնորհավորական ուղերձը:

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի՝ հոբելյարին հղված շնորհավորական ուղերձը ընթերցեց տիկին Մաղվալան:

Նշված ուղերձներում գնահատվում է Անահիտ Բոստանջյանի՝ երկու ժողովուրդների հոգեւոր միասնությանը նպաստող բարձր գործին մատուցած ծառայությունը:

Կիսելով պարոն Միշվելաձեի՝ ժողովուրդների բարեկամության թեման հաճախակի արծարծելու մասին գաղափարը՝ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը բարձր գնահատեց Բոստանջյանի՝ «Երկու ժողովուրդների միջեւ մշակույթի դեսպան լինելու եւ այդով՝ հայ ու վրաց ընթերցողին միմյանց ազգային մշակույթներին հաղորդակից դարձնելու գործում ունեցած ավանդը»:

Սրբազանը, ի շնորհակալություն՝ հայ-վրաց գրական կապերի ամրապնդման գործում ունեցած դերակատարման, հուշանվերներ հանձնեց Անահիտ Բոստանջյանին եւ Մաղվալա Գոնաշվիլուն:

Բանաստեղծ, «Ցիսկարի» հանդեսի խմբագիր Բաղաթեր Արաբուլին՝ իր գնահատական խոսքն ավարտեց Ա.Բոստանջյանի՝ վրացերեն թարգմանված «Վրացական պար» բանաստեղծության ընթերցումով:

«Մենք ունենք երկու՝ Վրաստան եւ պատմական Հայաստան հայրենիքներ, եւ մեր սիրով հզորացնում ենք նաեւ մեր Վրաստան հայրենիքը: Մեր բարեկամությունը ամուր է՝ մեր մարդկային բարեկամությամբ: Մեզ իրարից բաժանում չի լինի, որովհետեւ կան Ա.Բոստանջյանի, Մ.Գոնաշվիլու, Ջ.Չարկվիանու, Ռ.Միշվելաձեի նման մարդիկ»,- ասաց «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Բանաստեղծուհի Մզիա Խեթագուրին հոբելյարի գործունեությունը համեմատեց լուսավոր ամպի, որն արեւի շող է Վրաստանի եւ Հայաստանի համար:

Բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնազարը բարձր գնահատեց Ա.Բոստանջյանի՝ այսօր խիստ դժվարին՝ հրատարակչական գործունեությունը եւ նրան փոխանցեց Վրաստանում հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Սնխչյանի շնորհավորանքը:

Պրոֆեսոր Էմմա Ախտյանի խոսքում հոբելյարը վեր հանվեց՝ իբրեւ իր գործին զարմանալիորեն նվիրված, կախարդական ուժով լի, գործունյա մի կին:

Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանի բնորոշմամբ՝ Ա.Բոստանջյանի անսպառ էներգիայի աղբյուրը իր ծննդավայր Թբիլիսին է ու թբիլիսցի լինելը...

Մանկավարժ, Վրաստանի գիտության եւ կրթության նախարարության դեպարտամենտի նախկին պետ, պատմաբան Նորայր Բաղդասարյանը ներկաներին հիշեցրեց նաեւ Ա.Բոստանջյանի՝ երիտասարդ ստեղծագործողներին ընդառաջելու եւ հովանավորելու շնորհակալ աշխատանքը:

Հայտնի բանաստեղծ-թարգմանիչ Կամիլա Կորինտելլին շնորհավորեց եւ ընթերցեց Ա.Բոստանջյանի՝ իր կողմից ռուսերեն թարգմանված բանաստեղծությունը:

Հոբելյարին ջերմ շնորհավորանքներ բերեցին բանաստեղծ-քանդակագործ Բադրի Քութաթելաձեն, գրող-գեղանկարիչ Ռեզո Ադամիան, «Ինտելեկտ» հրատարակչության տնօրեն Կախմեգ Կուդավան:

Իրեն համար անսովոր իրադարձության մասին՝ Անահիտ Բոստանջյանը խոսեց հուզմունքով. «Այս իրողությունն ինձ համար նշանակում է, որ, մեկ անգամ եւս, պետք է խոնարհումս բերեմ վրաց գրողների, վրաց հասարակայնության գնահատանքին... Այսօրվա ջերմությունն ինձ, նորից ու նորից, պարտադրում է լինել շնորհակալ՝ բարության համար, լինել շնորհակալ՝ վրաց պոեզիայի թագուհի Անա Կալանդաձե բանաստեղծի անվան մրցանակի համար... Վրաց ժողովրդից ստանալ այս մրցանակը ինձ համար ե'ւ պատիվ է, ե'ւ պատասխանատվություն... Ուրախ եմ, որ այսօր այստեղ են երկու քրիստոնյա ժողովուրդների՝ իմ՝ հայ ազգի եւ ինձ նույնքան սիրելի վրաց ժողովրդի ներկայացուցիչները: Ինձ համար սա սիրո օր է, ուրախության օր ...»: Թե' հոբելյարի, թե' մյուս ելույթներում արժեւորվեց նաեւ ՀԳՄ երջանկահիշատակ նախագահ Լեւոն Անանյանի կարեւոր դերը հայ-վրաց գրական փոխկապերի զարգացման գործում:

Երեկոյի բարեկամական մթնոլորտին մեծապես նպաստեցին վրաց էստրադայի կենդանի լեգենդ, երգչուհի Իրմա Սոխաձեի, Վրաստանի վաստակավոր դերասան Զուրաբ Կաբեշավիձեի եւ անվանի կոմպոզիտոր Վաժա Ազարաշվիլու՝ Ա.Բոստանջյանի պատվին կատարած երգերը, Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի դերասան եւ երգիչ Հենրիխ Պետրոսյանի, հայկական Սբ. Էջմիածին եկեղեցուն կից «Ներսես Շնորհալի» պատանեկան երգչախմբի (գեղ.ղեկ.՝ Մարիամ Ագուլյան), ասմունքող Լիզա Թորոսյանի (ընթերցեց տատի՝ Ա.Բոստանջյանի բանաստեղծությունը), դերասան, բանաստեղծ Նիկա Քվրիվիշվիլու՝ հոբելյարի հայերեն ու վրացերեն հնչեցրած գեղարվեստական ելույթները:

«Վրաստան» թերթի խմբագրակազմը, միանալով շնորհավորանքներին, երկար կյանք եւ ստեղծագործական բեղմնավոր ուղի է մաղթում իր գործընկեր, առաքման եւ բաժանորդագրության ծառայության ղեկավար Անահիտ Բոստանջյանին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ՕՊՏԻՄԻԶԱՑՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն հայտարարեց, որ այս տարի միասնական ազգային քննությունները կանցկացվեն հին սկզբունքով, թեպետ ներկայումս աշխատանքներ են տարվում դրանց օպտիմիզացման համար:

Նրա խոսքերով, փոփոխությունների իրականացման դեպքում, դրանք կվերաբերվեն ինչպես միասնական ազգային քննություններին, այնպես էլ՝ ատեստացիոն քննություններին:

«Այս տարի ընդունելության քննությունները կանցկացվեն նախորդ տարիներին անցկացված սկզբունքով: Սակայն ունենք որոշակի դիտողություններ անմիջականորեն քննությունների համակարգի օպտիմիզացման ուղղությամբ: Դա վերաբերում է ինչպես ազգային միասնական, այնպես էլ՝ ատեստացիոն քննություններին: Փոփոխությունները մշակման փուլում են:

Նախարարի խոսքերով, միասնական ազգային քննությունների համար դիմորդների գրանցումը սկսվել է փետրվարի 10-ին ու կավարտվի մարտի 17-ին, ժամը՝ 18:00-ին:

Վրաստանի գնահատման եւ քննությունների կենտրոնի տեղեկատվությամբ, ուսանողներն ու դիմորդները պետք է գրանցում անցնեն կենտրոնի հետեւյալ կայքէջերով. www.neace.ge; online.neace.ge:

Գրանցման առաջին փուլում, դիմորդներն ընտրելու են հանձնելիք առարկաները, պետք է նշեն քաղաքը եւ լեզուն, որտեղ նրանք ցանկանում են հանձնել քննությունը: Գրանցման ժամկետի սպառումից հետո, վերոնշյալ տեղեկատվությունը փոփոխման ենթակա չէ:

Ինչպես անցյալ տարի, 2015 թվականին եւս, դիմորդները կունենան մի քանի ամսվա ընթացքում ընտրած կրթական ծրագրերի, դրանց քանակության եւ հաջորդականության փոփոխման իրավունք:

Ինչպես տեղեկացրեց գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տնօրեն Մայա Միմինոշվիլին, միասնական ազգային քննություններում ընտրական առարկաների թվին ավելացվում է եւս մեկը՝ քաղաքացիական կրթություն: Միմինոշվիլու խոսքերով, բուհը ինքն է որոշելու, թե որ առարկան է լինելու չորրորդ պարտադիրը, որը դիմորդը հանձնելու է կոնկրետ ֆակուլտետ ընդունվելու համար: Նրա խոսքերով, բուհերի 1227 մրցութային տեղերի համար՝ որպես պարտադիր առարկա, հայտարարվել է քաղաքացիական կրթությունը: «Բուհերին տրված է դիմորդներին՝ կոնկրետ ֆակուլտետ կամ ծրագիր ընտրելու համար մի քանի քննական առարկաներ նշելու իրավունք: Այդ դեպքում, որոշումն ընդունում է դիմորդը:

Ներկա դրությամբ, դիմորդները հանձնում են երեք պարտադիր առարկա՝ վրաց լեզու եւ գրականություն, ունակություններ եւ օտար լեզու: Իսկ ընտրական առարկաները մինչ այդ կազմում էին 8-ը՝ պատմություն, մաթեմատիկա, գրականություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, արվեստ: Այս տարի մենք ավելացնում ենք երրորդ առարկան՝ քաղաքացիական կրթությունը»,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

Նորամուծություն է ներդրված նաեւ թեստավորման տեւողության եւ միավորների առավելագույն քանակի գործում: Մասնավորապես, աշխարհագրության թեստավորման ժամկետը 3-ից նվազեցված է մինչեւ 2,5 ժամ, իսկ առավելագույն միավորները՝ 70-60: Պատմության թեստավորման ժամկետը չի փոխվել, սակայն առավելագույն միավորները՝ 70-ի փոխարեն, այսուհետեւ սահմանված են 70-ի չափով:

Կենտրոնի տվյալներով, այս տարվա միասնական ազգային քննություններին կմասնակցի հավաստագրված 64 բուհ: Բուհերի կողմից ներկայացվել է 44635 մրցութային տեղ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ - 146

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԻՆՔՆԱԳԻՐ ԵՐԳԱՐԱՆԸ



«Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է»: Հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովայի այս խոսքերը, որոնք, անշուշտ, ուղիղ իմաստով ընկալելը ճիշտ չէ, իրենց զուտ բանաստեղծական հմայքը պահպանում են մինչ այն պահը, քանի դեռ նրա գիրն առարկայորեն չի հառնել հայացքիդ առաջ: Ամեն դեպքում, Երեւանի Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում նրա ինքնագիր երգարանը, ժողովրդի լեզվով ասած՝ դավթարը տեսնելիս, առաջինը, որ կարող է անցնել այցելուների մտքով, հենց այս բառերն են: Ասենք, որ այդ դավթարը մինչեւ 1921 թվականը պահվում էր Հովհաննես Թումանյանի Թբիլիսիի բնակարանում:

Իսկ դեգերումների այն երկար ու ձիգ ճանապարհը, որ հաղթահարել է այս երգարանը մինչեւ իր վերջին հանգրվան հասնելը, փորձություններով հարուստ նրա ճակատագրին տալիս են նոր ու զարմանալի երանգներ: Հենց միայն ուշագրավ այն հանգամանքը, որ դավթարը թանգարանին է փոխանցել Հովհաննես Թումանյանը, կարծես փաստում է նախախնամության միջամտությունը, որ կամուրջ է ստեղծել երկու հայ մեծերի միջեւ:

Թե ինչպես է այն հասել գրողին, իմանում ենք վերջինիս՝ 1921 թվականին գրած նամակից. «Իր ժամանակին Հայ գրողների ընկերությունը Թիֆլիսում Սայաթ-Նովայի ժառանգներից ձեռք էր բերել Սայաթ-Նովայի ձեռագիր-տետրակը: Էդ տետրակը վարչության որոշումով պահվում էր ինձ մոտ, Հայ գրողների ընկերության անունը փոխվեց էս տարվա սկզբներին, դարձավ Հայ գրչի մշակների միություն: Այժմ Հայ գրչի մշակների վարչության համաձայնությամբ հիշյալ տետրակը ուղարկում եմ ձեզ՝ դնելու Հայաստանի թանգարանը: Տետրակը բաղկացած է 140 էջից եւ թվահամարակալված է հետագայում իր ձեռքով: Հայերեն երգերը գրած են վրացական տառերով, թուրքերեն երգերը՝ հայկական տառերով:

Հայ գրչի մշակների միության նախագահ՝ Հովհաննես Թումանյան

19 հոկտեմբեր 1921 թ. Թիֆլիս»:

Իսկ որպեսզի իմանանք, թե ինչպես է երգարանը հասել հենց մեծ գրողին, հարկ է մի փոքր ետ գնալ, հայացք նետել երկու հարյուրամյակների մշուշի միջով՝ տեսնելու համար, թե ինչպես է մի համեստ երգարան հաղթահարել ժամանակների փորձությունը, որպեսզի ձեռք բերեր իր երկրորդ կյանքը եւ հայտնվեր նրանց ձեռքերում, ում ժառանգված էր ի սկզբանե: Ապագա ցուցանմուշի ճակատագիրը վճռվել էր դեռեւս Սայաթ-Նովայի կենդանության օրոք՝ նրան արքունիքից վտարելուց հետո: Այդ ժամանակ նա իր ձեռագիրը հանձնել էր արքունական դիվանդպիր Հովհան Պենտելենցուն: Իսկ երգչի մահից հետո դավթարը հայտնվել էր նրա ժառանգների մոտ: Դրա պարունակությունը դեռ շատ հետազոտողների, գրականագետների հետաքրքրությունը պետք է շարժեր, դառնար բացահայտումների աղբյուր եւ ուսումնասիրման նյութ: Ու պատահական չէր, որ արդեն 1848-ին այն հայագետ Գեւորգ Ախվերդյանի ձեռքում էր, ով, վերծանելով հայերեն խաղերը, սկզբնավորեց սայաթնովագիտությունը:

Դավթարն այդկերպ դարձել է գալիք սերունդներին լուսավորողը, Սայաթ-Նովայի մասին պատմողը, նրան ճանաչեցնողը:

Մի քանի տարի անց, երգարանին կրկին վիճակված էր ձեքից-ձեռք անցնել: Ասում էին, որ այն նախ Սայաթ-Նովայի թոռան՝ Մովսես ավագ քահանա Սայաթյանի մոտ էր, հետո նրա որդու՝ Բագրատի, ով էլ 1913-ին նկարիչ Գեւորգ Բաշինջաղյանի միջոցով թանկագին մասունքը նվիրել է Հայ գրողների կովկասյան ընկերությանը: Մեկ այլ պատմության համաձայն, Հովհաննես Թումանյանին երգարանը հանձնել է Սայաթ-Նովայի ժառանգներից ուսուցչուհի Վարյան (Վառվառեն): Տեղեկություններ կան այն մասին, որ երբ մամուլում հարց է բարձրացվում երգչի գերեզմանին հուշարձան կանգնեցնելու եւ նրա երկերը վերահրատարակելու մասին, ուսուցչուհին որոշում է ձեռագիրը վստահել Թումանյանին: Վերջինս յոթ տարի խնամքով պահում է դավթարը, անգամ համարակալում է էջերը, իսկ Հայաստանում սովետական կարգերի հաստատվելուց հետո ուղարկում առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանին, լուսժողկոմն էլ ձեռագիրը հանձնում է Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանին, որի անմիջական ժառանգորդն է Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը:





19-X. 1921

Ահա այսպիսի ճանապարհներ կտրելով էլ պատմական դարձած դավթարը հասել է Թումանյանին: Սակայն, ցավոք, ժամանակն ու հանգամանքներն իրենց կնիքը, այնուամենայնիվ, թողել էին Սայաթ-Նովայի ձեռագրերի վրա: Երբ դավթարը հանձնեցին Թումանյանին, պահպանված էին դրա 140 էջերը: Յոթ հայերեն երգեր ընդգրկող չորս թերթեր դավթարից անհետացել էին: Ախվերդյանը վստահեցնում է, որ իր մոտ եղած ժամանակ երգարանի թերթերն արդեն «պատռված, գջլտած, մաշած են եղել»: Եվ այժմ, եթե այցելուներին բախտ վիճակվի բացել ինքնագիր երգարանը, նրանք կարող են հնամաշ էջերի վրա տեսնել 47 հայերեն եւ 119 թուրքերեն խաղերը: Ահա այսպես, երկար ու ձիգ տարիներ ձեռքից-ձեռք անցնելով՝ Սայաթ-Նովայի երգարանն ի վերջո դարձավ ոչ միայն նորաստեղծ թանգարանի հիմնաքար ցուցանմուշը, այլեւ՝ հայ ժողովրդի մշակութային թանկագին ժառանգությունը: Դավթարի ամեն մի թերթ տալիս է Սայաթ-Նովայի խաղերի «ունկնդիրը» դառնալու բացառիկ հնարավորություն, դարձնում նրան աշուղ-բանաստեղծի ապրած պահերի վկան...

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել նաեւ «Դավթար»-ի նմանահանությունը (սեւ-սպիտակ):

ԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԽՈՋԻՎԱՆՔԻ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ ՆՇՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ ԵՎ ԳՐՔԻ ՏՈՆԸ

Փետրվարի 19-ին, Մեծն Հովհաննես Թումանյանի ծննդյան օրն է, եւ Հայաստանի գրողների միության երջանկահիշատակ նախագահ Լեւոն Անանյանի նախաձեռնությամբ, դեռեւս 2008 թվականից այդ օրը նշվում է նաեւ որպես գրքի նվիրատվության օր:

Այդ օրը, Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների պանթեոնում հավաքվել էին վիրահայ հոգեւոր եւ աշխարհիկ դասի ներկայացուցիչներ՝ խնկարկելու Ամենայն Հայոց Բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հիշատակը՝ ի նշանավորումն նրա ծննդյան օրվա:

Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ Սամվել քահանա Թորոսյանի ձեռամբ անցկացված Ոգեկոչման կարգին եւ իրենց աղոթքը բարձրացրին առ Բարձրյալ: Հավարտ արարողության, քարոզի իր խոսքում Վազգեն Սրբազանը 20-րդ դարի ազգային ու անգերազանցելի, մեծագույն գործիչ անվանեց Հովհ.Թումանյանին, կարեւորեց ու կոչեց Պանթեոնի պահապան հրեշտակներին՝ թբիլիսահայերին, մնայուն կերպով խնամել Խոջիվանքն ու խոնարհում բերել Մեծաց շիրիմներին: Սրբազան հայրն իր օրհնությունը բերեց Թբիլիսիի քաղաքապետարանին, որ հովանավորն ու խնամատարն է Պանթեոնի, ինչպես նաեւ ՀՀ Սփյուռքի նախարարությանը, որի տրամադրած միջոցների շնորհիվ եւս պահպանվում է այս հոգեւոր ու գեղեցիկ անկյունը:

Շնորհավորելով ներկաներին բարի ու ուսանելի տոնի առիթով, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, ցավով նշեց, որ սպասում էր հանդիպել առավել հոծ բազմության եւ մասնավորապես, դպրոցականների ու մանկավարժների, որոնցից թերեւս յուրաքանչյուրի պարտքը պետք է լինի Պանթեոն այցելությունն ու սերը գրքի հանդեպ, ասաց նաեւ, որ երիտասարդությունը կտրվել է գրքից ու հեռացել ընթերցանությունից, կոչ անելով սիրել գիրքը:

Բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանը շեշտեց, որ պատահականություն չէ հենց Ամենայն Հայոց Բանաստեղծի ծննդյան օրը հռչակել Գրքի նվիրատվության օր, գրքի տոն. «...որովհետեւ գիրքը մասունք ու սրբություն է, մեր ուժն ու զենքը եւ մտավոր հարստության ամենակենսունակ աղբյուրը, հետեւաբար այդ օրը Թումանյանին մեր խոնարհումը բերելու ամենաճշմարիտ միջոցը»: Որպես խորհրդանիշ, բանաստեղծուհին ընթերցեց Մայրենի լեզվին նվիրած իր անտիպ բանաստեղծությունը, որից հետո, ավանդաբար, ներկաներին նվիրեց վերջերս հրատարակված իր գրքերը՝ «Կամուրջ» տարեգրքի հերթական համարը, Վալերի Հունանյանցի «Վիլ-Ժուիվ բուժարանի այցելուն»՝ հայերեն իր թարգմանությամբ, ամերիկահայ բանաստեղծ Ավիկ Դերենցի բանաստեղծական ժողովածուն, Մ.Բուլգակովի «Ջոյկայի բնակարանը»՝ Լեւոն Մութաֆյանի հայերեն թարգմանությամբ եւ այլ գրքեր:

Հանդիսության ավարտին, «Հայարտուն» կենտրոնի ասմունքի խմբակի (Թբիլիսիի Պ.Աղամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասան Սամվել Էլբակյան) սաները հատվածներ ընթերցեցին Հովհ.Թումանյանի եւ հայ այլ դասականների բանաստեղծություններից եւ պոեմներից:

Միջոցառման ներկաների թվում էին «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Ջիդիլյանը, վիրահայ նկարիչ Գիորգի Մանոյանը, Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ, պատմաբան Ենոք Թադեւոսյանը, բազմավաստակ մանկավարժ Ռոզա Ջոհրաբյանը եւ այլք:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՋԱՎԱԽԵԹԻԻ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները հանդիպեցին փոխնախարարներ Լիա Գիգաուրու եւ Գիորգի Շարվաշիձեների հետ:

Հանդիպմանը ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին հետաքրքրող բազմաթիվ հարցերին փոխնախարարները տվեցին սպառիչ պատասխաններ:

Ուսումնական դասագրքեր, ուսուցիչների աշխատավարձ, բարձր որակավորումով մանկավարժներ, սրանք են այն հիմնական թեմաները, որոնց շուրջ նախարարությունը ծրագրում է իրականացնել փոփոխություններ:

Նախարարությունը մեծ կարեւորություն է տալիս բարձրորակ ուսուցիչների պատրաստմանը եւ այդ ուղղությամբ մշակում է բուհերում ուսուցիչների պատրաստման մեկամյա ծրագիր՝ 60 կրեդիտանոց համակարգով եւ ինտեգրացված բակալավրիատական-մագիստրոսական հնգամյա ծրագիր՝ 300 կրեդիտանոց համակարգով: Ընդ որում, նախատեսվում է անվճար ուսուցում, հնգամյա ծրագրի դեպքում ուսմանը զուգահեռ՝ 5 տարվա ընթացքում ուսանողները դպրոցում կանցնեն մանկավարժական պրակտիկա: Այս ամենը կնպաստի երկրում որակյալ մասնագետների ավելացմանը:

Ուսուցչի աշխատավարձի բարձրացումը պայմանավորված կլինի նրա մասնագիտական պատրաստվածությունից եւ նվազագույն աշխատավարձը կկազմի երկրում առկա միջին աշխատավարձից ոչ ցածր:

Սպասվում է ուսումնական նյութերի եւ դպրոցական դասագրքերի ու դրանց գրիֆ շնորհելու կարգի վերանայում եւս:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՄՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 18-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալ Վիկտորյա Նյուլանդի հետ:

Հանդիպմանը Սերժ Սարգսյանն ընդգծեց, որ Հայաստանը մեծապես կարեւորում է Միացյալ Նահանգների դերակատարությունը տարածաշրջանում անվտանգության եւ կայունության պահպանման գործում: Իր հերթին՝ Վիկտորյա Նյուլանդն ընդգծեց, որ Միացյալ Նահանգները պատրաստակամ է քննարկելու Հայաստանին ԱՄՆ հետագա աջակցության հնարավորությունները: ԱՄՆ պետքարտուղարի տեղակալը շնորհակալություն հայտնեց Հայաստանին՝ խաղաղության եւ անվտանգության պահպանմանն ուղղված միջազգային հավաքական ջանքերին, մասնավորապես՝ Կոսովոյի եւ Աֆղանստանի խաղաղապահ գործողություններին շահագրգիռ մասնակցության համար:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում առկա մտահոգությունների վերաբերյալ, քննարկեցին բանակցություններն ի նպաստ տարածաշրջանի խաղաղության ու կայունության արդյունավետորեն շարունակելու հնարավորությունները:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ միջազգային եւ տարածաշրջանային արդի խնդիրներին, մարտահրավերներին, Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականության օրակարգային հարցերին, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ընթացիկ տարում Հայաստանում եւ արտերկրում նախատեսված միջոցառումներին:

ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Փետրվարի 17-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց տարածաշրջանային այցով Հայաստանում գտնվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքին (ԱՄՆ), Պիեռ Անդրիոյին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անչնական ներկայացուցիչ Անջել Կասպրշիկին: Համանախագահները Հայաստանի նախագահին ներկայացրել են Բաքվում իրենց ունեցած հանդիպումների տպավորությունները, քննարկել դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացի այս փուլում առկա մտահոգություններն ու հետագա քայլերին վերաբերող հարցեր:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի կառավարության որոշմամբ վարչապետի գլխավորությամբ կստեղծվի կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ: Գործադիրի նիստում ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը նշեց, որ նպատակը կոռուպցիոն ռազմավարության, դրա հիման վրա մշակված տարբեր ծրագրերի, միջոցառումների քննարկումն ու անցկացումն է: Խորհրդի կազմում ընդգրկվելու են նաեւ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորներ, ինչի համար կառավարությունը նամակով դիմելու է ԱԺ նախագահին, իսկ վերջինս էլ նամակով դիմելու է խմբակցություններին՝ անդամ առաջարկելու համար:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐ

Փետրվարի 18-ին Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն ընդունեց ԱՄՆ պետդեպարտամենտի պատվիրակության կազմում Հայաստան ժամանած ԱՄՆ պաշտպանության քարտուղարի փոխտեղակալ է.Ֆարկասին:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ ՀՀ-ում ԱՄՆ փոխդեսպան Ք.Փրայսը եւ ԱՄՆ եվրոպական հրամանատարությունից ժամանած բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են հայ-ամերիկյան պաշտպանական համագործակցության շրջանակներում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերին, նշելով, որ համագործակցությունն իրականացվում է թափանցիկության եւ փոխադարձ վստահության մթնոլորտում եւ դինամիկ զարգացում է ապրում:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՑ ՀԵՏ ԿԱՆՉՎԵՑԻՆ

Փետրվարի 16-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը նամակով դիմեց Հայաստանի ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանին, տեղեկացնելով Հայաստան-Թուրքիա արձանագրությունները Հայաստանի ԱԺ-ից հետ կանչելու վերաբերյալ իր որոշման մասին:

Հայաստանի նախագահի նամակում, մասնավորապես, ասված է. «Արդեն մոտ վեց տարի է անցել Հայաստան-Թուրքիա արձանագրությունների ստորագրումից: Այս ամբողջ ընթացքում Հայաստանը մշտապես հետեւողական դիրքորոշում է ցուցաբերել արձանագրությունները կյանքի կոչելու հարցում:

Սակայն պետք է փաստել Թուրքիայի իշխանությունների քաղաքական կամքի բացակայությունը, արձանագրությունների տառի ու ոգու աղավաղումները եւ նախապայմանների շարունակաբար արծարծումը: Դրան զուգահեռ, Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին, նոր թափ է ստանում ժխտողականության եւ պատմության խմբագրման քաղաքականությունը:

Ուստի, ես որոշում եմ կայացրել 2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները Ազգային ժողովից հետ կանչելու վերաբերյալ»:

Հիշեցնենք, որ 2008 թվականին Հայաստանի նախագահի նախաձեռնությամբ սկսվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նոր փուլ, որի արդյունքում 2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի եւ Թուրքիայի ԱԳ նախարարներն ստորագրեցին վերոնշյալ արձանագրությունները:

Արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիան, կտրուկ փոխելով իր դիրքորոշումը եւ հրաժարվելով «խելամիտ ժամկետներում» եւ առանց նախապայմանների երկկողմ հարաբերությունները կարգավորելու ձեռք բերված համաձայնությունից, Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում արձանագրությունների վավերացումը պայմանավորեց ԼՂ-ի հիմնահարցի կարգավորմամբ:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ընդունելության եւ միասնական քննությունները ոչ հեռավոր ապագայում հնարավոր է անցկացվեն համակարգիչների միջոցով:

Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, փետրվարի 17-ին, նշեց, հնարավոր է, որ ընդունելության քննություններն անցնեն ավտոմատացված համակարգչային համակարգերի միջոցով, եւ երեխաներն իրենց ընդունելության քննության թեստերը հանձնեն բացառապես համակարգչի դիմաց՝ օնլայն ռեժիմով՝ օգտագործելով լավագույն միջազգային փորձը:

«Զգալի գումար է պետք՝ մոտ 12 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք, որպեսզի այդ համակարգն ամբողջությամբ ներդրվի: Բայց, կարծում ենք, որ կարելի է մտածել ընդունելության քննության բարեփոխումների շրջանակում վերջնականապես այդ տարբերակին անցնելու մասին եւ երաշխավորել բացարձակ օբյեկտիվությանը մոտ օբյեկտիվություն»,- նշեց Արմեն Աշոտյանը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայ ուսանողների ջանքերով նոր ուսանողական ուղեցույց-ձեռնարկ է ստեղծվել: Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը փետրվարի 17-ին անցկացրին «Որակյալ կրթություն բոլորի համար» ուսանողական ուղեցույց-ձեռնարկի շնորհանդեսը: Նախաձեռնության հեղինակները կարեւորում են այն փաստը, որ ձեռնարկն արտատպված կամ թարգմանված չէ, այլ հենց իրենց սեփական նախաձեռնությունն է: Մի շարք կրթական կառույցներ եւ բուհեր շուտով կստանան ձեռնարկի օրինակներ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՑ ՀԵՏ ԿԱՆՉՎԵՑԻՆ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ (AJF) ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ՝ «ԱԴԱՄԱՆԴԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀՀ սփյուռքի նախարարությունը Հայ ոսկերիչների հիմնադրամի (AJF) հետ համատեղ որոշել է կրթաթոշակ շնորհել հինգ հայ ուսանողների՝ «Ադամանդի դասակարգում» մասնագիտությամբ ուսանելու նպատակով:

2015թ. աշնանն անցկացվող այս դասընթացի շրջանակներում Հայ ոսկերիչների հիմնադրամին կաջակցի Հայկական հեմոլոգիական լաբորատորիա-ակադեմիան (AGLA): Դասընթացը մեկնարկելու է 2015թ. սեպտեմբերից եւ ընդգրկելու է ադամանդի ուսումնասիրության բոլոր ասպեկտները:

Ավարտական քննությունները հաջողությամբ հանձնելու դեպքում շրջանավարտները կդառնան ադամանդի դասակարգման հավաստագրված փորձագետներ, ինչը թույլ կտա նրանց շարունակել գործունեությունը ոսկերչության եւ ադամանդագործության ոլորտում:

Դիմորդները պետք է լինեն հայ՝ առաջին կամ երկրորդ սերնդում, նվիրված լինեն հայկական ավանդույթներին եւ սովորույթներին եւ հավատարիմ մնան իրենց ժառանգությանը:

Ցանկացողները պետք է բավարարեն AGLA-ի ընդունելության պահանջները: Նրանք պետք է ներկայացնեն լրացված հայտը, երաշխավորող նամակ ու ռեզյումե (ինքնակենսագրություն) եւ ուղարկեն այն Սփյուռքի նախարարության Եվրոպայի հայ համայնքների վարչության europedep@yahoo.fr էլ. հասցեին: Ուսուցումը, ինչպես եւ ուսումնական ձեռնարկները հայերեն լեզվով են, ուստի հայերենի իմացությունը պարտադիր է: Նախընտրելի է, որ դիմորդներն ունենան ֆիզիկայի եւ քիմիայի տարրական գիտելիքներ: Տեսական դասաժամերն սկսվում են 18:00-ին, իսկ գործնական պարապմունքներն ընթանալու են ազատ գրաֆիկով: Դասընթացներն ամեն օր են, բացի շաբաթ, կիրակի եւ տոնական օրերից:

Հայտերի ու լրացված փաստաթղթերի հանձման վերջնաժամկետը 2015թ. օգոստոսի 30-ն է: Հայտի ձեւն ու պահանջները առկա են առցանց, ինչպես նաեւ կարող են ներկայացվել AJF-ի միջոցով:

Ուսումնական ծրագրում ներառված են՝

1) Ադամանդի բնույթն ու ադամանդագործների չգրված օրենքները,

2) Ալմաստների ֆիզիկա,

3) Ալմաստների ֆիզիկական բնութագրերը,

4) Ալմաստների բյուրեղաբանական համաչափությունը,

5) Ալմաստների օպտիկան,

6) Ալմաստների գույնն ու դրա բնույթը,

7) Ալմաստների սինթեզը (HPHT, CVD),

8) Ալմաստների կազմավորումն ու հանքաարդյունահանումը,

9) Անմշակ ալմաստների տեխնոլոգիական հանքաբանությունն ու դասակարգումը,

10) Ադամանդի դասակարգումը,

11) Արհեստական եւ ազնվացված ադամանդներ:

AGLA գտնվում է Հյուսիսային պողոտայի բիզնես կենտրոնի 9-րդ հարկում՝ Հյուսիսային պողոտա 1/31, Երեւան, Հայաստան, հեռ. (37410) 50-14-33:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք դիմել Սփյուռքի նախարարության Եվրոպայի հայ համայնքների վարչություն հետեւյալ էլ. փոստով europedep@yahoo.fr կամ զանգահարել՝ (37410) 58 56 01 (112) հեռախոսահամարով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՓԵՏՐՎԱՐ

21.02.2015. Սուրբ Թեոդորոս զորավարի հիշատակության օր

22.02.2015. Արտաքսման կիրակի

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է նաեւ Արտաքսման:

Եկեղեցական հայրերն իմաստուն կերպով Քառասնորդաց Պահքի շրջանի կիրակիներն այնպես են դասավորել եւ այնպիսի անվանումներ ու խորհուրդներ տվել, որոնցով ի հայտ է գալիս մարդկության կյանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործություն, զղջում, ապաշխարանք: Սա ինքնին մարդուն խորհելու եւս մեկ առիթ է սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանն արդյունավետ անցկացնելու համար:

28.02.2015. Սուրբ Կյուրեղ Երուսաղեմի Հայրապետի, Կյուրեղ եպիսկոպոսի եւ նրա մոր՝ Աննայի հիշատակության օր

ՎԱՐԿԱՆԻՇ

ԹԲԻԼԻՍԻՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՂԵՑԻԿ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԹՎՈՒՄ



Հանրաճանաչ “Architecture And Design” համացանցային ամսագիրը պատրաստում է «Ավելի քան 50 գեղեցիկ քաղաքներ, ուր հարկ է լինել թեկուզ մեկ անգամ» հաղորդաշարը: Վրաստանի զբոսաշրջության աշխատակազմի տեղեկատվությամբ, այնպիսի քաղաքների թվում, ինչպիսիք են Ամստերդամը, Լոնդոնը, Նյու Յորքը, Սիդնեյը, Բարսելոնան, նշված է նաեւ Թբիլիսին: Զբոսաշրջիկներին գրավող աշխարհի քաղաքների թվում Վրաստանի մայրաքաղաքը զբաղեցնում է 31-րդ տեղը:

ԲԱՐԵԿԵՑԻԿ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ 80-ՐԴՆ Է

Legatum Institute-ը կազմել է աշխարհի երկրների բարեկեցության 2014 թվականի վարկանիշը (2014 Prosperity Index): Ինդեքսը ներառում է 142 պետություն՝ ընդգրկելով աշխարհի բնակչության 96 տոկոսը եւ համաշխարհային ՀՆԱ-ի 99 տոկոսը: Վարկանիշի առաջատարը դարձյալ Նորվեգիան է: Նրան հաջորդում են Շվեյցարիան, որը նույնպես անցյալ տարվանից պահպանել է իր տեղը, եւ Նոր Զելանդիան, որը երեք հորիզոնականով բարելավել է դիրքը: Աշխարհի ամենաբարգավաճ երկրների տասնյակում տեղ են գտել նաեւ Դանիան, Կանադան, Շվեդիան, Ավստրալիան, Ֆինլանդիան, Նիդերլանդները եւ ԱՄՆ-ը:

Ցուցակում Վրաստանը 80-րդն է, իսկ Հայաստանը 95-րդը:

Ցուցակը եզրափակում է Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը:

Եվրոպայի խոշորագույն երկրների թվում առավել բարգավաճ է ճանաչվել Մեծ Բրիտանիան, որը 13-րդ տեղն է զբաղեցրել ընդհանուր հաշվարկում: Գերմանիան 14-րդ տեղում է, Ֆրանսիան՝ 21-րդ, Իսպանիան՝ 26-րդ, Իտալիան՝ 37-րդ, Թուրքիան՝ 86-րդը:

Legatum Institute-ի ինդեքսը գնահատում է ութ չափանիշ՝ տնտեսությունը, կրթությունը, առողջապահությունը, անձնական ազատությունը, անվտանգությունը, ձեռնարկատիրական գործունեությունն ծավալելու հնարավորությունները, կառավարումը եւ սոցիալական կապիտալը:

Հետխորհրդային տարածքում լավագույն վարկանիշն ունեն Լիտվան (42-րդ տեղ) եւ Լատվիան (44-րդ տեղ): Բելոռուսը 53-րդն է, Ուկրաինան՝ 63-րդը, Ռուսաստանը՝ 68-րդը, Ադրբեջանը՝ 79-րդը:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՆՇՎԵՑ ՀԱՐԻՍԱՅԻ ՓԱՌԱՏՈՆՈՎ

Թբիլիսահայ համայնքում գեղեցիկ ավանդույթ է դարձել Բուն Բարեկենդանի տոնը նշանավորել հայկական հարիսա ճաշատեսակի փառատոնով, որը, Վիրահայոց թեմի առաջնորդարանի եւ «Հայարտուն» կենտրոնի աջակցությամբ, նախաձեռնում եւ իրականացնում է Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միությունը:

Փառատոնը տարեցտարի ընդարձակվելով, վերածվում է ժողովրդական տոնահանդեսի, որին հայ կինը ներկայանում է տանտիրուհու իր հմտությամբ ու հոգու ջերմությամբ պատրաստած ազգային այս ճաշատեսակով:

2015 թվականի փետրվարի 15-ին, «Հայարտուն» կենտրոնում կայացած տոնահանդեսին իրենց ներկայությունն էին բերել Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Կարեն Մելիքյանը, տարբեր կառույցների ղեկավարներ, հյուրեր եւ հոծ հասարակություն:

Միջոցառումը բացեց Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախագահ Սուսաննա Խաչատրյանը:

Դահլիճի երկայնքով շարվել էին 20-ից ավելի կաթսաներ հարիսայի տարատեսակներով: Վիրահայոց թեմի առաջնորդը օրհնելով հարիսայի կաթսաները, ներկաներին հրավիրեց համտեսելու ավանդական հարիսան:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԻ



Առանձին կատեգորիաների համար վարորդական իրավունքի հանձնումը կսահմանափակվի: Նման նախաձեռնությամբ հանդես է եկել երկրի կառավարությունը եւ առաջարկել համապատասխան փոփոխություններ կատարել «Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքում:

Օրինանախագծում ավելացվել է նոր ձեւաչափ, ըստ որի՝ իրավասու անձինք հանձնարարականի հիման վրա, առողջության վիճակի մասին տեղեկանքում կարող է նշվել, որ անձին վարորդական իրավունքն ընդհանրապես չի տրվում կամ տրվում է սահմանափակ կատեգորիաներով կամ սահմանվելու են այլ սահմանափակումներ: Դեռեւս պարզ չէ, թե սահմանափակումներն ու արգելքը քաղաքացիների որ կատեգորիային կվերաբերվի:

ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ - ԼԱՐՍԻ

ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՐԿԿՈՂՄ ՓԱԿ Է

Ստեփանծմինդա-Լարսի ավտոճանապարհը փետրվարի 20-ի՝ ժամը 11:00-ի դրությամբ, երկկողմանի փակ է բոլոր տեսակի ավտոմեքենաների համար:

Վրաստանի ՆԳՆ ԱԻ դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն՝ առատ ձնատեղումների պատճառով Ստեփանծմինդա-Լարսի ավտոճանապարհը փակ է: Ճանապարհը երթեւեկելի դարձնելու նպատակով վրացի ճանապարհաշինարարների կողմից կատարվում են մաքրման աշխատանքներ:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Շախմատ. խաղավերջին մտածելու համար ժամանակ չլինելը: 9.Ծագումով հայ ռուս հոգեբան Բորիս ...: 10.Փոթորիկ: 11.Զովացուցիչ ըմպելիք: 13.Ընկեր՝ մեքսիկացու լեզվով: 16.Հերիք: 17.Մեսրոպյան այբուբենի տառ: 19.Մարմնի որեւէ մասը արհեստականորեն տաքացնելու հարմարանք: 22.Ջուր ցանող սարք: 24.Քաղաք Իսպանիայում: 25.Ճապոնական շախմատ: 27.Թել տվող, մանրաթելեր ունեցող: 29.Ծիծաղաշարժ արարք կամ խոսք, կատակ: 32.Շվեդ դերասանուհի ... Գարբո: 33.Իտալացի ջուրբակահար եւ կոմպոզիտոր ... Պագանինի: 35.Գանձարկղ: 38.Մետաքսյա նուրբ կտոր: 40.Աշխարհահռչակ հայ նկարիչ Արշիլ ...: 41.Հայ բանաստեղծ, արձակագիր Վիգեն ...: 44.Հայ ազատագրական պայքարի գործիչ Հովսեփ ...: 47.... դե ժանեյրո: 48.Իտալացի կինոդերասանուհի Օռնելա ...: 50.Ուտելու համար պիտանի, որ կարելի է ուտել: 51.Ամբողջ թիվ, որը թվային առանցքը բաժանում է դրական ու բացասական թվերի: 52.Օժանդակ բայ: 53.«... կանգնի, գերան կկոտրի»: 54.Կորեական ավտոմեքենա: 55.Գնացքի մետաղե ճանապարհ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ֆրանսիացի երգահան Լեո ...: 2.«Թռչեի ... տուն» (երգ): 3.Բարձր ու լայն ալիք: 4.Ուղտերի ընտանիքին պատկանող հարավամերիկյան բեռնակիր կենդանի, ուղտայծ: 5.Սուտլիկ որսկանի ընկերներից: 6.Ֆրանսիացի քիմիկոս-օրգանիկ Միշել Էժեն ...: 8.Աշխարհահռչակ բալետային-պարային խումբ: 12.Գետ Հայաստանի Լոռու մարզում: 14.Առանց երեսի վերմակ: 15.Համազարկային կրակի ռեակտիվ հրթիռային համակարգ: 18.Բույսերի՝ հատկապես հացահատիկային բույսերի ցողունը: 19.Խումբ, զորախումբ: 20.Էլեկտրական շղթաները անջատող-միացնող սարք: 21.Ատրճանակի մակնիշ: 23.Ռուս ծովակալ Ֆյոդոր ...: 26.Գուրգենը՝ ժարգոնով: 28.Ռուս սովետական գրող ... Դորոշ: 29.Ցոփ, շվայտ, ...: 30.Վրացի դերասան ... Աբաշիձե: 31.Անգլիական պարատեսակ: 34.Ընտրովի ղեկավար մարմին, հանձնախումբ: 36.Ծույլիկի «սիրած» գնահատականը: 37.Քաղաք ԱՄՆ-ում: 39.Ազգ Թաիլանդում: 42.Անձայն: 43.«... Նոստրա»: 45.Գույնի թունդը: 46.Սեղմ, սահմանափակ: 48.Հատապտուղ: 49.Շվեյցարացի ժողովրդական առասպելի հերոս Վիլհելմ ...:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Գիտական: 9.Չարլի: 10.Կնունք: 11.Ճախարակ: 12.Պալմա: 14.Ապտակ: 16.Արքայադուստր: 18.Արսեն: 20.Վալետ: 21.Լիմոն: 25.Պարան: 26.Վաղնջական: 27.Հետագա: 28.Օրորոց: 29.Նրան: 30.Ալիկ: 32.Գրաշի: 33.Վարձու: 36.Ինդիա: 40.Իշխան: 41.Անբարոյական: 43.Մեղրի: 44.Տանգո: 45.Յասաման: 46.Սուրամ: 47.Բեկար: 48.Վենետիկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Սիրավան: 2.Վարագա: 3.Վարարուն: 4.Փարատել: 5.Կլիմա: 7.Դնեպր: 8.Անվարան: 13.Արտով: 14.Ատյան: 15.Երփներանգ: 17.Մետրո: 19.Նիագարա: 20.Վագրածի: 22.Նաիրի: 23.Սնանկ: 24.Սահակ: 25.Պատիվ: 29.Նշենի: 31.Կարատ: 32.Գինետուն: 34.Ուշագրավ: 35.Դար: 37.Շահանե: 38.Ծովահեն: 39.Գագարին: 41.Արցախ: 42.Նարեկ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445